ՀՈՎՈՒԱԿԱՆԱՑՆ

ՊՈՐԼԻՈՍԻ ՎԻՐԳԻԼԵԱՑ ՄԱՐՈՎՆԻ

ԾԱՂԿԱՓԱՂ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՄԵԼԻԲԷՈՍ

Մելիբէոս հովիւ պատմէ զվիճել Թերսեայ ընդ Կորիդոնի առաջի իւր և Դաբնեայ, և զառնուլ Կորիդոնի զմրցանակն։ Կորիդոն ասէ զկուռնելեայ Գալլոսի կամ զԱսինեայ Պոլլիոնի բերէ զդէմս, որ երկոքին ևս քերթողք էին երևելիք. Թերսիս զայլոյ ուրուք ի նախանձորդաց նոցին քերթողաց բերէ զդէմս. Դաբնի զմիոյ ուրուք ի բարեկամաց նոցա, առ որում վիճէին. իսկ Մելիբէոս զվիրզիլեայ, որ ի խնդրելն ի նոցանէ օգնութիւն առ ի ստանալ անդէն զանդս իւր և զխաչինս, նոքա յապահովեն զնա և դատաւոր իւրեանց կացուցանեն։

ՄԵԼԻԲԷՈՍ. ԿՈՐԻԴՈՆ. ԹԻՐՍԻՍ.

Մելիբէոս

Ի սօսաւիւն սրղոցւոյ հարեւանցիկ բազմէր Դաբնի.
Ընդ ըզհօտս համախրմբեալ Կորիդոնի իսկ եւ Թիրսեայ,
Թիրսեայ զօդիս, Կորիդոնի ըզլիաստին կաթամբ զայծիս,
Երկաքանչիւր ծաղկեալք տիովք, արկադացիք երկաքանչիւր,
Հանգէտք ի յերգս տաղից երկաքանչիւր կազմք ի գուպար։
Ընտանօր մոլորեալ նոխազ հօտիս էր հեղինակ,
Մինչ ըզմատաղ մըրտենիս պաշտպանէի ես ի ցըրտոյ.
Տեսի զԴաբնի, ետես եւ ինքըն զիս անդուստ, եւ ձայնէր. Այ աղ
Ընյսըր մատիր, Մելիբէէ, ողջոյն այծիդ է եւ խոյոց.
Եւ թէ վայրիկ մի դադարել կարես, հանգիր ընդ հովանեաւս.
Երինջքդ ինքնին այսըր գայցեն ընդ մարգս ի հուպ, ասէ Մինկիոս
Կանաչագեղ պարածածկէ ըզգետեզերս, յառոյգ ի շամբ.
Եւ բըզզեն ի սըրբազան ասէ ի կաղնիս գընդակք մեղուաց։
Եւ զի՞նչ իսկ առնել էր ինձ. ոչ Ընկիպպէ ասէ առընթեր
Եւ ոչ Փիլլիս կայր առ իս, զի մոցեալքեց ի կաթանէ
Ընտընին ըզգառինս ի բաց ի մարցըն մակաղէր։
Ընյլ եւ պայքար մեծ ասէանոր Կորիդոնի էր ընդ Թիրսեայ,
Եւ անտես ի լուր խաղոց նոցին ըզգործս իմ արարի.
Նոքա փոխանակաւ յայնժամ առին մըրցել տաղիւք,
Օր ի փոխառփոխ նուագել նոցա հրաման այսպէս էր Մուսայից,
Օայս Կորիդոնի եւ զայն Թիրսեայ արկեալ ի կարգ։

Կորիդոն

Ցանկալիք մեր Լիբեթրեան յաւերժհարսունք, ազդեցէք ինձ
Երգըս Կոդրեայ տաղիցն հանգոյն, զի նա սակաւ ինչ ի Փեբեայն
Երգեաց ընդհատ ի նուագաց. կամ թէ բնաւից չիցէ նոյն կար,
Կացցէ սրաձայնս այս եղէգն ըզդիցանուէր սոճւոյս ի կախ ։

Թիրսիս

Հովիւք արկադացիք, ըզնորընծայս զիս ըզքերթող
Պըսակեցէք բաղեղամբ. լիցի Կոդրոս նախանձաբեկ ։
Կամ թէ յանդէպըս գովիցէ, մատնէծաղիկ ինձ ի ճակատ
Բոլորեցէք. մի՛ շուրթըն ժանտ ըզպուէտս համբաւ յաչաղիցէ ։

Կորիդոն

Եղջիւր բազմոստ զերկարակեաց քեզ եղջերուի Միկոն մանուկ
Եւ ըզկառափն, ով Դելեան, զըստեւակիր ձօնէ զկընճի.
Իսկ այս ինձ թէ յաջողէ, կուռ ի յողորկ վիմէ ամբողջ
Արձանասյիս՝ կարմրերփեան կօշիկ ի սրունըս պարաւանդ ։

Թիրսիս

Ամանոր քեզ գուշ կաթին եւ շատ աթերս այս քեզ լիցի,
Ով Պրիապէ, աղքատին դու խնամակալ գոս պարտիզկան.
Մարմարակուռ խմոլսանն ըզքեզ առ այժըմ կանգնեցից,
Այլ հօտիս ի լրանալ գառամբք՝ կացցես ոսկեղինիկ ։

Կորիդոն

Քաղցրիկ դու ինձ քան ըզհիբլեան ծոթոր, ներեանըդ Գալատէ,
Ձիւնափայլ քան ըզկարապ, գեր զըսպիտակ բաղեղն ի գեղ.
Արի եկ ի կըշտապինդ նախրէն ի գոմս անդրէն դառնալ,
Եթէ իցէ ինչ ընդ քոյդ երբէք քեզ հոգ ընդ Կորիդոն ։

Թիրսիս

Իսկ ես դառնագոյն քեզ քան ըզբոյս սարդինական,
Դըժնէագոյն քան ըզչիչխան, անարգ թուեցայց քան ըզմամուռ,
Եթէ չիցէ տիւս այս ինձ ձիգ քան ըզտարւոյ պարունակ.
Դարձայք ի տուն կըշտապինդ, թէ պատկառիք երբէք երինջք ։

Կորիդոն

Աղբերք լոռաւէտք եւ դալարիք դիւրինչք ի նինջ,
Եւ որք զանօսր ածէն ըզձեզ կանաչագեղ թուփք հովանի,

Յերեսաց յեղյեղակաց լերուք խաշին պատըսպարան,
Ամառն աՀա գայ բոցակէզ, ուռնուռն ի զուարթ պըտկունք ի յուռ։

Թիրսիս

Աստ մարխ աստ գէր եւ կրակարան. աստ Հուր յոլով եւ մըշտավառ,
Այն սեւաթոյր սեւամք աստանօր, ի մուր ուի մեղձ յարաթաթաւք.
Աստ սարսուռ Հիւսիսոյ այնչափ ինչ աՀ մեզ արկանէ,
Որչափ գայլոյ Հօտ յոգներամ, որչափ սրընթաց գետոյ ափունք։

Կորիդոն

Այն են գիՀիք աստանօր, է քըստմնափուշ մեզ շագանակ,
Եւ Համասփիւռ միրգք ընդ ծառովք իւրաքանչիւր տապաստ անկեալ.
Բերկրին Համագոյքս այժմիկ բոլոր գեղածիծաղ,
Բայց թէ ի բաց ի լերանց աստի կացցէ Ալեքս չըքնաղ,
Ըզգետոց իսկ յայնժամ տեսցես պըտոյտըս ցամաքեալ։

Թիրսիս

Ծիզու արդ, խորշակաՀար նուաղի պասքեալ մարգագետին.
Զայգեստամնեաց Հովանի Սպանդարամետ խանդայ բըլրոց.
Բայց յոտին մերոյս Փիլլեայ կանաչասցին ծառք Համօրէն,
Եւ ի զուարթ թօնընկէցս իջցէ յերկիր յորդ Արամազդ։

Կորիդոն

Ալկիդեայ կաղամախ, այգի Հաճոյ Դիոնիսեայ.
Գեղանւոյն մուրտ Աստղըկան, եւ Փեբեայ իւրն է սարդենի.
Փիլլիս սիրէ զարքակաղնի. եւ ցորչափ զայն սիրէ Փիլլիս,
Ոչ մըրտենի արքակաղնոյ, եւ ոչ փեբեանն յաղթեսցէ սարդ։

Թիրսիս

Սարոյ ի պարտիզի, Հացի յանտառըս գեղապանծ,
Բարձր ի լերինս եղեւին, և կաղամախ առ գետեզեր.
Այլ գեղանուդ Լիկիդայ, թէ ստէպ դու այց ինձ առնիցես,
Հացի յանտառս եւ սարոյ տեղի տացէ ի պարտիզի։

Մելիբէոս

Յիշեմ ցայս վայր, եւ լեր ի վէգ եկեալ ի զուր՝ պարտէր Թիրսիս.
Կորիդոն այնուՀետեւ է մեզ ծանօթըն Կորիդոն։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

4. Արկադացիք երկոքեանն, կամ զի իսկապէս էին յԱրկադիոյ, և կամ զի Հմուտք էին յերգ արկադացի. քանզի տեղի երգոյս ոչ է յԱրկադիա, այլ յայս կոյս Գաղղիոյ առ Մինկեաւ գետով. ոչ ինչ Հեռի 'ի Մանտուայ։

11 · Մինչիոս գետ յամրընթաց, որ 'ի Բենակեայ լճէ գետահետեալ՝ Թանայ զՄանտուա, և անտի հոսէ 'ի Պադոս ։

13 · Կաղնիք առ հեթանոսս նուիրականք էին Դիոսի, և համարէին բնակել 'ի նոսա յաւերժհարսունք, կեալ և մեռանել ընդ նոսին ։

14 · Ալկիպպէ և Փիւլլիս աղախինք Մելիբեայ ։

22 · Լիբեթրեան աղբիւր էր 'ի Մագնեսիա, ըստ Սոլինոսի, հանդրուան քերթողաց. այլք 'ի Բիովտիա դնեն զայն մերձ յՀելիկոն, օթեւան յաւերժհարսանց և Մուսայից ։

23 · Կոդրոս բանաստեղծ ժամանակակից Վիրգիլեայ ։

25 · Սովորութիւն էր Ճարտարաց յարուեստս զիւրաքանչիւր գործի կախել նուէր արգասիս խնամակալաց իւրեանց դից. յայս ակնարկէ Կորիդոնի կախել զսրինգ իւր զսոճւոյ՝ որ դիցամօրն Կիւբելեայ էր նուիրական, վասն սիրելւոյ նորա Ատիսի 'ի սոճ փոխելոյ ։

28 · Տարապայման գովութիւն առիթ ակնհարութեան համարէր առ նախնիս. քանզի Նեմեսիս դիցուհի վրէժխնդիր չարեաց և փարձաւորիչ բարեաց ցասնոյր ընդ այն, և վրէժս յայնպիսեացն գովեցելոց պահանջէր ։ Առ 'ի զգուշանալոյ 'ի չարէ աստի՝ պսակէին մանեխաղկամբ, որ խափանիչ յուռթից և հմայեկաց համարէր ։ Վասն որոյ իմաստք տողիցս են. Պսակեցէք զիս անթառամ պսակաւ, նախանձ արկանել 'ի Կոդրոս. իսկ եթէ նա առաւել քան զարժանն գովեսցէ զատողս իմ, մանեխաղիկ ածէք ինձ 'ի ճակատ՝ զի մի ակնհար եղէց ։

30 · Աստանօր Կորիդոն նուիրէ Արտեմեայ դիցուհւոյ 'ի ձեռն Միկոնի բարեկամի իւրոյ եղջիւր եղին և կառափն վարազու. և խոստանայ 'ի յաջողել որսոցն կանգնել նմա և անդրի կճեայ ։

35 · Պրիապոս Աստղկան և Դիոնեսի որդի, պահպանիչ պարտիզաց, վասն որոյ 'ի դրունս անդ պարտիզաց կանգնէին անդրիս նորա ։

38 · Հիբլեան ծոթոր. Հիբլա լեառն 'ի Սիկիլիա, բերրի ծոթրնոյ և մեղուաց ։
Կորիդոն աստ Ներէան անուանէ փաղաքշանօք զսիրուհին իւր զհովիւն Գաղատէա. քանզի Ներեանն Գաղատէա յաւերժահարսն էր, դուստր Ներեայ և Դորիսի, սիրելի Պողիփեմեայ ։ Սա իբրև գիտաց զի Գաղատէա առաւել քան զինքն սիրէր զհովիւն սիկիլիացի զԱկիս զորդի Փաւնի, սպան զնա հարեալ զվիմի, ընդ որ գթացեալ յաւերժհարսին, փոխեաց զնա 'ի գետն՝ որ բղխէ յԵտնայ և անկանի 'ի սիկիլեանն ծով ։

42 · Քան զխոտս սարդինական. լռւ իմն ասելով բուսանի 'ի Սարդինիա, որ զկերողսն ձգտէ զՃիղս 'ի ժպիտ բռնազբօս, և է մահաբեր թունիւք ։ Ուստի առեալ է սարդինական կոչել զծաղր հեգնական բանի ։

48 · Այսինքն 'ի յեզերական խեցգետնոյ, յամառնային արեւադարձէ, յորժամ բոցակիզագոյն է արեգակն ։

50 · Մորխ փայտ իւղային դիւրավառ, վասն որոյ և փոխանակ ջահի 'ի կիր առեալ ։

60 · Սպանդարամետ կամ Դիոնիս դիք այգեաց ։

62 · Աստղկան կոչէին հինք զայերս կամ զհեթեր, ուստի անձրևք չայեկանք 'ի բեղնաւորութիւն երկրի իջանեն ։

63 · Ալկիդէս այսինքն Հերակլէս Թոռն Ալկէոսի, որ կաղամախիւ պսակեալ էջ 'ի սանդարամետս ։

72 · Իմաստ տողիս է, զի յետ այսր պարտութեան Թիրսեայ յայսքան ազգի ազգի վէճս 'ի Կորիդոնէ, յայնմհետէ Կորիդոն արժանի իւրումն համբաւոյ երեւեալ Թուի ։

Ռուսաստան: (Տես երես 143)

Կրօնք.—Գրեթէ ամէն տեսակ կրօնք թոյլ տրուած է Ռուսաստանի մէջ. բայց որովհետև տէրութեան կրօնքն է Յոյն-Ռուսական ըսուածը, ուստի բնական կերպով աւելի քան զայլս առանձնաշնորհութիւններ ու ազատութիւններ ունի նոյն պաշտամունքը ։

Արդ զանազան կրօնք ունեցող ժողովուրդներուն թիւն այս է ։

Յունադաւանք կամ Յոյն-Ռուսք .	50,000,000
Հռովմէական կամ ուղղափառ Յոյնք .	3,000,000
Հռովմէական ուղղափառք զանազանք .	2,000,000
Հայք	390,000
Լուտերականք . . .	1,000,000
Կալվինականք	40,000
Հրեայք	2,000,000
Մահմետականք	2,000,000
Պուտտիք	215,000
Շամանիք	153,000

Ռուսաց եկեղեցին ամենաչնչին զանազանութիւն ունի Յունաց եկեղեցիէն՝ և եղած քանի մը պզտի տարբերութիւններն ալ թեթև բաներ են. Եկեղեցական բաներու մէջ գլխաւոր վեհապետը կայսրն է, զոր Մեծն Պետրոս Մոսքուայի պատրիարքներէն վերցընելով կայսերաց սեպհականեց 1721ին. Որ և իւր կրօնական բարեկարգութիւն կայսեր հաւանութեամբը կ'ըլլայ, ինչպէս եպիսկոպոսաց ընտրութիւնն ու այլ և այլ կարգեր ու կանոններ սահմա-